



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

09.07.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԱՑ-ԼՕ-2019/80**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Մասնակից «Ֆլեշ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ն. Հակոբյանի, Լ. Կարապետյանցի,

Պատվիրատու ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ՝ Ս.

Նալբանդյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26-1/9718-2019 գրությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ին
(այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող
մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով
ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարության 05.06.2019թ. թիվ 1114/6747-19 գրության հիման վրա, 11.06.2019թ. «Ֆլեշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 05.06.2019թ. թիվ 1114/6747-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱԳ նախարարության կարիքների համար 2019թ. մայիսի 23-ին ԳՀ ընթացակարգով հայտարարվել է ԱԳՆ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով վառելիքի (Բենզին ռեզուլյար, Բենզին պրեմյում, Դիզելային վառելիք) ձեռքբերման մրցույթ: 2019թ. մայիսի 30-ին կայացած հայտերի բացման վերջնաժամկետին գնային առաջարկ էր ներկայացրել միայն «Ֆլեշ» ՍՊԸ-ն: 2019թ. մայիսի 30-ին ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կարարվել է հարցում: 2019թ. մայիսի 4-ին ստացված եզրակացությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը Ձեզ ենք ներկայացնում ԱԳՆ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթերը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԱԳՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆլեշ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. «Ֆլեշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 12.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Ֆլեշ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26-1/9718-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

«Ֆլեշ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ հայտնել է, որ.

«ՀՀ արտաքին գործերի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին 29.05.2019 թվականի մասնակցության հայտ է ներկայացրել «ՖԼԵՇ» ՍՊԸ ն ճանաչվել առաջին տեղ գրադեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ մասնակից «ՖԼԵՇ» ՍՊԸ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ՊԵԿ կողմից փրված եզրակացության համաձայն «ՖԼԵՇ» ՍՊԸ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 286 000 ՀՀ դրամ հարկային պարտավորություններ, որը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրոշմանիշային վճարներից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կոմիտեի կողմից փրամադրված եզրակացությունը, արձանագրել է, որ «ՖԼԵՇ» ՍՊԸ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունները, որի պատճառով մերժել է Ընկերության ներկայացված հայտը:

Գտնում ենք, որ «ՖԼԵՇ» ՍՊԸ գնման ընթացակարգի շրջանակում չի խախտել որևէ պարտավորություններն հետևյալ հիմնավորումներից ելնելով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ կետի համաձայն Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին մասին 6-րդ կետի համաձայն՝ Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պարտվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ Հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասին 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրացնում է հետևյալ գործառույթները... իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի /այդ թվում է հարկային պարտավորությունների և դրանց մարումների/ դիտման հնարավորության ապահովումը:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտադրելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված

տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

ՀՀ արտաքին գործերի նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ԱԳՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին 28.05.2019 թվականի մասնակցության հայտ է ներկայացրել «ՖԼԱՇ» ՍՊԸ և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«ՖԼԱՇ» ՍՊԸ «ԱԳՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում առաջին տեղն զբաղեցրել սակայն ընթացակարգային շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ ՊԵԿ արված հարցումների արդյունքում պարզվել է, որ Ընկերությունն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություններ 286 000 ՀՀ դրամ գումարի չափով, որն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ Օրենքով նախատեսված դրոշմանիշային վճարներից:

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքից հստակ երևում է, որ «ՖԼԱՇ» ՍՊԸ հայտ ներկայացնելու օրը՝ 29.05.2019 թվականի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չի ունեցել:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ Օրենքով նախատեսված դրոշմանիշային վճարների մասին «ՖԼԱՇ» ՍՊԸ հարկային մարմնի կողմից որևէ իրազեկում չի ստացել, իսկ այդ տեղեկությունը «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքից բացակայել է:

«ՖԼԱՇ» ՍՊԸ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքից չէր կարող չունենալ լիարժեք համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևալլ հարկատեսակներ՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի

շահույրահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային պարտավորություններ, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Նշենք նաև, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ Օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի վճարվում է Հիմնադրամ, մինչդեռ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները պետք է վճարվեն ՀՀ պետական կամ համայնքային բյուջեներ:

Հաշվի առնելով նաև «Լառի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ 13.09.2018թ ներկայացված ԳԲԽ-ԱՄ-2018/83 բողոքի քննության շրջանակներում ՀՀ ՊԵԿ կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը 12.09.2018թ ուղղված գրությամբ /մատնանշված 01.10.2018թ կայացված թիվ ԳԲԽ-ԱՆ-2018/83 որոշմամբ/ հենց ՀՀ ՊԵԿ հայտնել է հետևյալը, «Դրոշմանիշային վճարների գծով առկա պարտավորությունները անհրաժեշտ է չդիտարկել որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորություն»:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Ֆլեշ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. ՍՑ-ԼՕ-2019/80 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՀՀ արտաքին գործերի նախարարության կարիքների համար վառելիքի (բենզին, դիզելայի վառելիք) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԳՆ-ԳՀԱՊԶԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

29.05.2019թ.-ին Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆլեշ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2019թ. կայացած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (29.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 286 000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների թույլատրելի շեմը գերազանցելու հիմքով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 29.05.2019թ. դրությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.06.2019թ. Ընկերությանը տրված թիվ 3316 տեղեկանքի համաձայն՝ 286 000 ՀՀ դրամ գումարի չափով պարտավորությունը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26-1/9718-2019 գրությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից

հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու

հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

«Հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. ... իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Սույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Արտաքին գործերի նախարարության կարիքների համար վառելիքի (բենզին, դիզելային վառելիք) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԳՆ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդյունքում գնահատող հանձնաժողովի 30.05.2019թ. կայացած նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից «Ա պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Ֆլեշ»

ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (29.05.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 286 000 ՀՀ դրամ գումարի չափով:

ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Մասնակիցը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ֆլեշ» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Ֆլեշ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (29.05.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, քանի որ այն, ինչպես ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածն է սահմանում, պետք է համարվի որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, և անհրաժեշտության դեպքում ընդունվի այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2019թ. թիվ /26-1/9718-2019 գրությամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ